

## Վլադիմիր Մաղայան

### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ «ԶԱՎԱԽԾ» ԹԵՐԹՈՒՄ

Բանալի բառեր - «Զավախծ» թերթ, Հայկական հարց, Հայոց ցեղասպանություն, Հայոց դատ, լուսաբանել, ականատեսների վկայություններ, հողվածներ, անհերքելի փաստեր, պատմական նշանակություն:

Հայ մամուլի պատմության էջերում իր մնայուն տեղն ունի XX դարասկզբին Ախալքալաքում հիմնադրված «Զավախծ» թերթը<sup>1</sup>, որը, հրապարակ իջնելու առաջին իսկ օրվանից սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքը լուսաբանելուց բացի, իր էջերում լայն տեղ է հատկացրել Հայկական հարցի գարզացումների և ելեզների պարզաբանմանը, հետևողականորեն անդրադարձել է արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի կարևոր դրվագներին:

«Զավախծ» Վրաստանի<sup>2</sup> գավառական հայերեն անդրանիկ պարբերականն էր, որի հիմնադրն ու հրատարակիչ-խմբագիրը եղել է աչքի ընկնող լուսավորիչ և գրող, առաջադեմ հրապարակախոս ու հասարակական-քաղաքական գործիչ Վարդան Շահպարոնյանը (1872-1941):

Թերթը, որի առաջին համարը լույս է տեսել 1913 թ. հունվարի 12-ին, անմիջապես դարձել է հրատարակչի գաղափարների քարոզիչը: «Մենք անում ենք առաջին փորձը Ախալքալաքում հրատարակելու գրական-հասարակական օրգան՝ նվիրված գավառի կարիքներին,— նշված է անդրանիկ համարի առաջնորդողություն: —Ոչ դատարկ սնակառությունը, և ոչ թերևամիտ նմանությունը ուրիշներին ստիպեցին մեզ սկսել այսպիսի մի ծանր և պատասխանատու գործ: Ինքը՝ բարդացած կյանքը ստեղծում է մի պարբերական օրգանի անհրաժեշտությունը, որը մի կողմից ճիշտ կերպով պիտի պարզե մեր գավառի տնտեսական և կուլտուրական դրությունը, մյուս կողմից՝ ցույց տա այդ դրությունը բարելավելու միջոցները»<sup>3</sup>:

Այնուհետև, մեկ առ մեկ թվարկելով «Զավախծի» հիմնական նպատակներն ու խնդիրները, խմբագիրն ավելացնում է. «Թեև «Զավախծ» գլխավորապես զբաղվելու է տեղական հարցերով, բայց նա չի կարող չարտահայտել իր կարծիքը այն ընդհանուր համագգային խնդիրների մասին, որոնցով զբաղվում է հայ մամուլը» (1913, № 1, էջ 2-

<sup>1</sup> «Զավախծ» ունի «Գրական-հասարակական շաբաթաթերթ» եմբանվանումը. ծավալը՝ 8 էջ, չափսը՝ 23x31 սմ, տպաքանակը՝ չի նշված, տպարանը՝ Ախալքալաքում, արագատիկ Ս. Գրիգորյանի: Երկրորդ տարվանից դարձել է երկշաբաթաթերթ և որոշ ընդհատումներով լույս է տեսել մինչև 1916 թ. մայիսի վերջը: Ունեցել է շուրջ 70 համար:

<sup>2</sup> «Զավախծի» հրատարակության ժամանակ Վրաստանն ու Հայաստանը, ինչպես նաև հայկական ու հայաբնակ այն մարզերն ու գավառները, որոնք վկայակրչված են մերկա հոդվածում, գտնվում էին Ուլսական կայսրության սահմաններում: Դրանք միայն խորհրդային կարգերի հաստատումից հետո են ընդունվել Վրաստանի կազմում:

<sup>3</sup> «Զավախծ», 12 հունվարի, 1913, № 1, էջ 1 (Այսուհետև հղումները «Զավախծ» թերթին կտրվեն տեքստում, փակագծերի մեջ՝ նշելով լույս ընծայման օրը, ամիսը, տարեթիվը, հերթական համարը և էջերը):

3): «Այս տեսակետից մենք զգում ենք մեզ բոլորովին ազատ,— շարունակում է նա: – Մենք ուշադրությամբ կը հետևենք իայ մամուլին, բայց մեր դիրքը բոլորովին անկախ է գոյություն ունեցող թերթերից և հոսանքներից, բարձր՝ տեղական դատարկ ինտրիգներից և թայֆայական խմբերից, ազատ՝ նեղ կուսակցություններից, «Զավախքը» պաշտպան կիանդիսանա լայն մասսաների շահերին: Դժվար է մեր գործը, ճանապարհը մեր՝ փշոտ, բայց մենք չենք վախենում դժվարություններից և փշերից: Մենք հավատում ենք, որ «Զավախքը» կունենա կարդացողների լայն շրջան, և այդ շրջանը ժամանակի ընթացքում կմեծանա: Գիտակից տարրերը մեզ ցույց կտան համակրանք և աջակցություն: Այդ հույսով մենք սկսում ենք մեր ծանր և պատասխանատու գործը» (նույն տեղում, էջ 3):

«Զավախքը», առաջնորդվելով մշակված այս կայուն ծրագրով, առաջին իսկ համարներից սկսած, այլ հրատապ խնդիրների հետ մեկտեղ ուշադրության կենտրոնում է պահել «ընդհանուր համազգային հարցերը», որոնք սրտամոտ ու հարազատ էին ամբողջ ջավախքահայությանը: Թերթի յուրաքաչչուր համարում օգտագործված ավելի քան տասը մշտական բաժինների ու խորագրերի շարքում աչքի են ընկնում «Յայկական հարց», «Բալկանյան պատերազմ», «Բարենորոգումներ Յայաստանում», «Վերջին լուրեր», «Վերջին տեղեկություններ» խորագրերը, որոնց տակ գետեղված նյութերը նվիրված են իայ ազգային-ազատագրական պայքարի, արևմտահայության ազատագրման և Յայկական հարցի պատմությանը: Դրանք բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբում կարելի է ընդգրկել իիմնականում խմբագրի ու տեղական հեղինակների գրած նյութերը, իսկ երկրորդում՝ թարգմանություններ օտարալեզու մամուլի էջերից և արտատպություններ կենտրոնական թերթերից, որոնց նպատակն է ընթերցողներին ծանոթացնել միջազգային դիվանագիտական ատյաններում Յայկական հարցի քննարկումների արդյունքներին:

Յայկական հարցին նվիրված «Զավախքի» հրապարակումների շարքում հատկապես աչքի են զարնում խմբագրության նախաձեռնությամբ հրատարակված նյութերը, որոնք ընթերցողին հետևողականորեն ծանոթացնում են իարցի զարգացումների պատմությանը՝ սկզբնավորման պահից մինչև քննարկվող ժամանակաշրջանը: Այս առումով հետաքրքիր է թերթի անդրանիկ համարում տպագրված Վ. Շահպարոնյանի «Յայկական հարց» վերտառությամբ հոդվածը: «Յայկական հարցը թեև երկու հարյուր տարի է, որ ծեծվում է,— գրում է նա,— բայց նոր շրջանի մեջ մտավ վերջին Ռուս-թուրքական պատերազմից հետո: Երբ ռուսական հաղթական բանակը 1878 թվականին կանգնել էր Սան-Ստեֆանոյում՝ Պոլսի պատերի տակ, այդ ժամանակ հայերը Ներսես Վարժապետյան պատրիարքի առաջնորդությամբ խնդրեցին Ռուսաց կայսրությունից բարելավել հայկական վեց վիլայեթների [Երգրումի,

Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի (Տիգրանակերտ), Խարբերդի և Սվագի] դրույթունը՝ բարեփոխումներ մտցնելով այդ վիլայեթներում: Ռուսաց դիպլոմատիան դեմ գնաց (ինա՞ ընդառաջեց – Վ. Ա.) հայերի խնդիրք-դիմումին և Սան-Ստեֆանոյի դաշնագրի մեջ 16-րդ հոդվածով պարտավորվում էր վերոհիշյալ վեց հայկական վիլայեթներում մտցնել բարենորոգումներ Ռուսաստանի հովանավորությամբ» (նույն տեղում, էջ 6):

«Այս հոդվածով Հայկական հարցը վերականգնվում է և մտնում է նոր շրջան, – եզրակացնում է հեղինակն ու ավելացնում: – Երբ Եվրոպական դիպլոմատիայի միջամտությամբ վերաբերնվում էր Սան-Ստեֆանոյի դաշնագրիը, 16-րդ հոդվածին փոխարինում է 61-րդ հոդվածը և ռուսական հովանավորությունը դառնում է ընդհանուր Եվրոպականի, այսինքն վեց մեծ պետությունները (Ռուսաստան, Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա, Ավստրիա և Իտալիա) պետք է ստիպեին թյուրքիային վերանորոգություններ մտցնելու հայկական նահանգներում: Այսպես, փոխանակ մեկի, այժմ վեց հովանավոր ունենք, բայց որը և պատճառ եղավ քնացնելու Հայկական հարցը» (նույն տեղում):

Սան-Ստեֆանոյի դաշնագրի ընդունումից հետո Ավստրո-Հունգարիայի և Անգլիայի նախաձեռնությամբ 1878 թ. ամռանը տեղի է ունենում Բեռլինի վեհաժողովը, որի նպատակն էր վերանայել Սան-Ստեֆանոյի հաշտության դաշնագրի որոշ դրույթներ, այդ թվում և Հայկական հարցին վերաբերող 16-րդ հոդվածը: Բուռն քննարկումներից հետո վեհաժողովն Անգլիայի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ճնշմամբ ընդունում է 16-րդ հոդվածի անգլերեն խմբագրումը, որը Բեռլինի դաշնագրում ընդգրկվում է որպես 61-րդ հոդված: Դրանով Անգլիան Ռուսաստանին գրկում է հայկական բարենորոգումների վրա վերահսկելու իրավունքից, իսկ այդ պարտականությունը միանգամից դրվում է վեց տերությունների վրա<sup>1</sup>: Այդպիսով, Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովի պայմանագրով դադարում է միայն Օսմանյան կայսրության ներքին գործը լինելուց և ստանում է միջազգային դիվանագիտական կարգավիճակ, դառնում մեծ տերությունների դիվանագիտության շահադիտական շահարկումների ու չարաշահումների առարկա: Բեռլինի վեհաժողովի ընդունած պայմանագրիը հետագայում իր բացասական հետքն է թողնում արևմտահայության ճակատագրում<sup>2</sup>, միաժամանակ շրջադարձային դառնում Հայկական հարցի պատմության մեջ և խթանում հայկական ազգային-ազատագրական պայքարի վերելքը: Հայ մտավորականությունը, հասարակական-քաղաքական շրջանները, Եվրոպական դիվանագիտությունից հուսախաբ՝ որդեգրում են Արևմտյան Հայաստանը գինված ապստամբությամբ ազատագրելու գաղափարը:

<sup>1</sup> Տե՛ս բնագիրը Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 105-130:

<sup>2</sup> Այս առիթը տեղին է ասված լորդ Շերբրուկի պատկերավոր խոսքը, որ անգլիական քաղաքականությունը Թուրքիայում բնակվող բրիստոնյանների հանը «փակում է դժոխքից դուրս գալու ելքը» (սես Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, էջ 402):

«Զավախքը» Հայկական հարցի պատմությունն ավելի հստակ ներկայացնելու նպատակով գրում է. «Անցնում են տարիներ, իննսունական թվականներին առաջ եկան հայկական շարժումները, այնժամ Անգլիայի ձեռքով արծարծվեց Հայկական հարցը, բայց Եվրոպական պետությունների մրցման պատճառով Անգլիան մնաց մենակ և թյուրք կառավարությունը, խրախուսված իր բարեկամ պետություններից, վերանորոգությունների փոխարեն սկսեց զարիւրելի կոտորածները, որով Հայաստանը քար ու քանդ եղավ, հայերից ջարդվեցին 200.000 հոգի, քայքայվեցին տնտեսապես, և այսպես Հայկական հարցը հանձին 61-րդ հոդվածի դարձյալ քննեց և խեղդվեց արյան ծովի և արցունքների մեջ: Այժմս էլ, երբ սկսվեց Բալկանյան պատերազմը<sup>1</sup>, երբ կանայք, մանկտիք կոտորող թուրքական «քաջարի» բանակը ջարդ ու փշուր սեղմված է Դարդանելի նեղուցին, երբ բուլղարական, սերբական, հունական և չերնոգորիական քաջարի բանակները գենքի ուժով թուրքիային ստիպում են կատարելու իրենց իրավացի պահանջները, այնժամ նորից մոխիրների տակից բարձրանում է արյունոտ Հայկական հարցը» (Նույն տեղում, էջ 6):

Վ. Շահպարոնյանն այս իրապարակումից մի քանի օր անց կրկին անդրադառնում է Հայկական հարցին: «Ահա երկու ամիս է, որ ամբողջ Եվրոպական մամուլը զբաղվում է Հայկական հարցով, – գրում է նա, – ռուսական մամուլը ևս նույնն է գրում՝ պետք է օգնել խեղճ հայերին: Ինչպես երկում է, այս անգամ ռուս դիպլոմատիան լուրջ կերպով զբաղվում է այս հարցով և ուզում է իր ձեռներեցությամբ լուծել Հայկական հարցը: Ռուս դիպլոմատիան ցանկանում է իրագործել տալ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը իր գերիշխանության տակ, որը և համարյա բոլոր հայերի ցանկությունն է այժմս: Այս բանը հայերիս մեջ հույս ներշնչեց և հայերից զանազան խմբակցություններ խնդրեցին Վեհափառ կաթողիկոսին՝ դիմելու նորին մեծություն Ռուսաց կայսեր, որպեսզի նա իր հզոր հովանավորության տակ առնե Թուրքիո դժբախտ հայ ժողովրդին» (1913, № 3, էջ 19)<sup>2</sup>:

Այնուհետև հեղինակը նշում է, որ Եգիպտոսից Նուպար Պողոս փաշան մեկնել է Անգլիա՝ հայցելու նրա միջամտութունն այդ հարցի լուծման համար: Թուրքիան խորամանկորեն կազմում է բարենորոգումների իր ծրագիրը, որպեսզի Ռուսաստանին ու Եվրոպական տերություններին հեռացնի այդ հարցի լուծմանը մասնակցելուց: Իսկ Եվրոպական տերություններն իրենց հերթին հայ պատգամավորներ են իրավիրուն մասնակցելու այդ հարցին նվիրված իրենց կազմակերպած խորհրդակցություններին և ամեն կերպ ջանում, որ ըստ Թուրքիայի ցանկությունների բավարարություն տան

<sup>1</sup> Բալկանյան առաջին պատերազմը հարատևել է 1912 թ. հոկտեմբերի 9-ից մինչև 1913 թ. մայիսի 30-ը:

<sup>2</sup> «Զավախքի» էջագրումը կատարվել է ոչ թե ըստ առանձին համարների, ինչպես այժմ է, այլ՝ ամբողջ տարվա համար միասնական հաշվարկով՝ առաջին համարից մինչև վերջինը: Սակայն, ցավոք, խախտվել ու խառնվել են, ինչպես առանձին համարների հերթական համարակալումներ ու ամսարկերը, այնպես էլ որոշ էջեր ու էջարկեր: Մենք այստեղ մեջբերումների էջերը նշում ենք այնպես, ինչպես որ դրանք տրված են թերում:

Հայկական հարցին, որպեսզի այդպիսով խեղին այդ շարժումը: «Ահա այս դրությանն է առաջնուն Հայկական հարցը, – եզրակացնում է հեղինակը, – թե հետո ինչ կլիմի, դեռ հայտնի չէ, և երևի այդ հարցի դրական կամ բացասական լուծմանը ուժ պետք է տա եռապետական (Գերմանիա, Ավստրիա, Իտալիա) դաշնակցությունը (նույն տեղում, էջ 20):

«Զավախքի» նույն համարում տպագրված «Հայկական ավտոնոմիա» վերտառությամբ հոդվածը ևս նվիրված է արևմտահայության ազատագրման խնդիրներին: «Հայերը պետք է իմանան, – կարդում ենք այնտեղ, – որ կարող են հույս ունենալ Ռուսաստանից: Պատմությունը կանգուն է ասելու համար, որ ռուսաց կառավարությունը միշտ ի մոտո հետաքրքրվել է նրանց (հմա՝ հայերի – Վ. Ա.) վիճակով: Դեռ վերջերս մեր դեսպանը հրավիրեց Բարձր Դիան ուշադրությունը քյուրդստանուն կատարված սպանությունների վրա և հասկացնել տվեց նրան, թե հարկավոր է իրական միջոցներ ձեռք առնել՝ այնտեղ՝ Ռուսաստանին սահմանակից այդ երկրներուն հաստատելու կարգ ու կանոն և երաշխավորել հայ ժողովրդի ապահովությունը: Հայերը պետք է իմանան, որ, անկասկած, մենք դրանով չենք բավականանա: Թուրքիայի կողմից մշակված ռեֆորմների ծրագրերը չեն կարող ստանալ ռուսական կառավարության հովանավորությունը, եթե դրանք բացարձակապես չեն երաշխավորի հայ ժողովրդի բոլոր շահերը և բոլոր կարիքները» (նույն տեղում, էջ 21):

Այս ամենի հետ մեկտեղ հոդվածի վերջում հեղինակն ավելացնում է. «Հայոց հարցը բարձրացնելու համար մենք գտնում ենք, որ այս րոպեն վատ է ընտրված, որովհետև այդ հարցը կարող է ավելի լավ կարգավորվել, եթե իրենց լուծումները գտած կլինեն այն բոլոր հարցերը, որոնցով հետաքրքրված է այժմ Եվրոպան» (նույն տեղում):

Թերթի նույն համարում «Վերջին տեղեկություններ» խորագրի տակ՝ «Կավказ» լրագրից թարգմանաբար արտատպված «Կոստանդնուպոլսում կատարված հեղաշրջումը» վերտառությամբ հաղորդագրությունը տեղեկացնում է, որ 1913 թ. հունվարի 11-ին, երբ օսմանյան նախարարները նախաճաշելիս են եղել պալատում, ցերեկվա ժամը 3.30-ին Բարձր Դիան հրապարակի վրա երևացել է Ենվեր-բեյը մեկ տասնյակ երիտասարդ սպաներով ու շուրջ հարյուր զանազան մարդկանցով շրջապատված, որոնց թվում եղել են նաև մոլլաներ: «Ամբոխը տանում էր դրոշականներ և աղաղակում «Չենք ցանկանում ամոթաբեր հաշտություն, կեցցե՛ պատերազմը», – գրում է թերթը (նույն տեղում, էջ 22): Բարձր Դիառը պաշտպանող երեք պահապաններից միայն մեկն է փորձում դիմադրություն ցույց տալ ամբոխին, որը և ենթարկվում է խոշտանգումների: Ենվեր-բեյը սպաների ուղեկցությամբ մտնում է Բարձր Դիան դահլիճը, որտեղ անմիջապես լսվում են ատրճանակների կրակոցների ձայներ: Սպանվում են Նազըմ փաշան, նրա երկու աղյուտանտները և այլք՝ թվով վեց հոգի:

Բարձր Դուն հետ միացված հեռախոսալարը վաղօրոք կտրված է եղել: Այսպես, Երիտ-թուրքերը վերստին կատարում են պետական հեղաշրջում և կրկին անցնում իշխանության գլուխ:

Ըստ մեկ այլ թերթի՝ «Русское слово»-ի հաղորդագրության, որը դարձյալ թարգ-մանաբար ներկայացրել է «Զավախքը», հունվարի 17-ին Թուրքիայի նոր կառավարությունը դիմում է տարածել այն մասին, որ պետք է պատերազմը շարունակել ու չընդունել Թուրքիայի պարտությունը: Սակայն անկախ այդ ամենից՝ Բալկանյան առաջին պատերազմում Թուրքիան կրում է խայտառակ պարտություն և կորցնում իր բռնազավթած Եվրոպական տարածքների մեջ մասը:

Թերթն, այսպես, իր եջերում հետևողականորեն ներկայացնում է պատերազմի ընթացքը: Օրինակ՝ մարտի 17-ի համարում կարդում ենք. «Բեռլինից և Սոֆիայից հեռագրում են, որ Աղրիանուպուլսը արդեն գրավված է դաշնակիցների գորքերի կողմից: Թուրքերը մեծ ջարդ են կրել և տվել շատ գերիներ» (1913, № 9, էջ 71), իսկ մարտի 31-ի համարում նշված է. «Լրագրերը տեղեկացնում են, որ տաճկահայ ժողովուրդը երկյուղ կրելով, թե հայկական ջարդերը նորից կարող են սկսվել ու պատերազմից հետո հսկայական ծավալներ ստանալ, և իր կյանքը տեսնելով վտանգի մեջ՝ հայրենիքից գաղթում է խմբերով ու անհատներով, գաղթում է սարսափահար՝ թողնելով իր օջախը»: «Անատոլիայի հայաբնակ գավառների դրությունը վատթարանում է քյուրդ իրոսակների թալանների և բռնությունների հետևանքով,— ասված է մեկ այլ հաղորդագրության մեջ: — Մի քանի շրջաններում քրդերը հրաժարվում են ճանաչել թյուրքաց իշխանությունը» (1913, № 11, էջ 87): Տագմապալից հաղորդումները հաջորդում են միմյանց. «Պոլսից տեղեկացնում են, որ դրությունը Յայաստանում ծանր է: Վանում հայերի վերաբերմամբ կատարվում են հալածանքներ ու սպանություններ»: «Նման վիճակ է նաև Այդինում, Բիթլիսում և այլուր, ուր սպանվել են մի քանի հայեր, հրահրվում են անկարգություններ: Երգնկայում ևս հայերի նկատմամբ բռնություններ են գործադրվել» (1913, № 13, էջ 95): Ահա, այսպես, համարից-համար «Զավախքի» հաղորդումները սաստկանում են և դառնում մռայլ, իսկ արևմտահայության վիճակը՝ անորոշ ու տագնապալի:

Այսպիսի լարված իրադրության պայմաններում Եվրոպա մեկնած Յայկական պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը Յայկական հարցի առիթով Փարիզում կարդացել է մի դասախոսություն: 1913 թ. հուլիսի 14-ի համարում «Զավախք», «Բակու» թերթի 144-րդ համարից թարգմանաբար արտատպելով այդ թերթի թղթակից Ռ. Իվանովիչի «Ի՞նչ են սպասում հայերը Եվրոպայից» վերտառությամբ հոդված՝ գրում է. «Պողոս Նուբար փաշան ֆրանսիական կոմիտեի կողմից կազմված բազմամարդ և ընտիր հասարակության առաջ հանդես է եկել մի ընդարձակ քաղաքական

հայտարարությամբ (դեկլարացիա), որը ներկայացնում է գրեթե բոլոր հայերի կարծիքը Թյուրքիայի արևելյան վիլայեթների ռեֆորմների խնդրի վերջնական և ցանկալի վճռի վերաբերյալ» (1913, № 25, էջ 200): Այդ դասախոսությունը հետաքրքրական է այն տեսակետից, ասված է այնտեղ, որ Պողոս Նուբարը, Եվրոպայի պաշտոնական դիվանատներում ճանաչվում է որպես հայ ժողովրդի ներկայացուցիչ, ուստի «Զավախքը» նպատակահարմար է գտնում իր ընթերցողներին ծանոթացնել այդ քաղաքական հայտարարության գլխավոր կետերի հետ. «1. Թյուրքիայում ապրող հայերը ցանկանում են մնալ օսմանցիներ: 2. Ծրագրված ռեֆորմները պետք է բացառապես վարչական բնույթ ունենան և ոչ՝ քաղաքական: 3. Ռեֆորմների կարիք ունեն ոչ միայն հայերը, այլև բոլոր վիլայեթներում ապրող ժողովուրդները: 4. Ռեֆորմների իրազործումը պետք է լինի անպայման մեծ պետությունների հսկողության ներքո, սակայն պահելով ամրողական հարգանքը Տաճկաց կառավարության արժանապատվության նկատմամբ: 5. Հսկողությունը (կոնտրոլը) չպետք է լինի բացառապես որևէ մի մեծ պետության մենաշնորհ, այլ բոլոր մեծ պետությունների՝ միասին: 6. Ռեֆորմները, որոնք ապահովում են խաղաղությունը և կարգ ու կանոնը հայկական նահանգներում (գավառներում), նպատակ ունեն պակասեցնել ներքին վարիչների գործունեությունը և նպաստել պետության հետագա զարգացմանը» (նույն տեղում):

Չնայած Բալկանյան պատերազմում Թուրքիան կրում է խայտառակ պարտություն, սակայն Յայլական հարցն այդուհանդերձ լուծում չի ստանում: Պատերազմից հետո, Մակեդոնիայի բաժանման ժամանակ նախկին դաշնակից երկրների միջև սկիզբ են առնում տարածայնություններ, որոնց պատճառով և մեծ տերությունների հրահրմամբ սկսվում է Բալկանյան երկրորդ պատերազմը<sup>1</sup>, այս անգամ արդեն Բուլղարիայի կողմից՝ ընդդեմ Սերբիայի, Յունաստանի, Ռումինիայի, Չեռնոգորիայի և Թուրքիայի: Այս պատերազմում, սակայն, պարտվողը դառնում է Բուլղարիան, որը կորցնում է առաջին պատերազմում իր ծեռք բերած նվաճումների մի զգալի մասը: Իսկ Թուրքիան դրանից շահում ու ետ է վերցնում իր Եվրոպական տարածքների մի մասը և Աղրիանուպոլիսը:

«Զավախքն» իր երկրորդ տարեշրջանի անդրանիկ համարում (05.01.1914 թ.) տպագրված հաղորդագրություններից մեկում տեղեկացնում է, որ «հրչակավոր Ենվերբեյը» դարձել է Թյուրքիայի զինվորական մինիստրը, որը Ս. Պետերբուրգի հեռագրական գործակալության թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ ասել է. «Մեր երկիրը նախ և առաջ ունի տնտեսական վերածնության մեծ կարիք, որի համար էլ զորքի բյուջեն 12 միլիոն ֆունտ ստերլինգից կրճատվում է մինչև 6 մլն. ֆունտ ստերլինգի: Պետք է նշեն նաև, որ իրենց պաշտոններից հեռացվել են 280 բարձրաստիճան սպաներ:

<sup>1</sup> Բալկանյան երկրորդ պատերազմն սկսվել է 1913 թ. հունիսի 29-ին և տևել է մինչև օգոստոսի 10-ը:

Մենք մի այսպիսի համարձակ քայլ կատարում ենք, վստահ լինելով, որ ՈՒՍԱՍՄԱՆը Թուրքիայի վերաբերմանը նվաճողական ծգտումներ չունի, և մեր երկու պետությունների միջև հարաբերությունները բարեկամական են» (№ 1, էջ 6): Ապա շարունակելով իր զրույցը՝ ասել է. «Ինձ համարում են գերմանասեր: Սակայն, եթե դա առաջ է եկել այն բանից, որ մենք հրավիրել ենք գերմանացի սպաներ մեր զորքը բարեկարգելու համար. ապա դա սխալ է, քանի որ մեր սիստեմն ու զորքի ներքին կազմը առաջ ենք տանելու գերմանական զինվորական սիստեմով, և այդ անելով՝ մենք աչքի առաջ ենք ունեցել մեր հարաբերությունները Յունաստանի հետ, որը կարող է սուր կերպարանը ստանալ, եթե ի նկատի ունենանք, որ Փոքր Ասիայի ափերը մեծ մասամբ բնակեցված են հույններով» (նույն տեղում, էջ 7): Ենվեր-բեյը նշել է նաև, որ պաշտոնից հեռացված սպաներից 100-ը գեներալներ են, որոնց թվում՝ Աղրիանուպոլսի հերոս Շուքրի փաշան: Ծովային մինիստր է նշանակվելու Ձեմալ փաշան, ավելացրել է նա, իսկ Բեռլինի մեր դեսպան Մահմուդ Մուխտար-փաշան նշանակվելու է Երզնկայի Երրորդ զորաբաժնի գլխավոր հրամանատար» (նույն տեղում): Այդ ժամանակ ինքը՝ Ենվերը եղել է գլխավոր շտաբի կառավարիչը՝ ունենալով երկու օգնական, որոնցից մեկը եղել է գերմանական բանակի բարձրաստիճան սպա:

Առաջին աշխարհամարտից օրեր առաջ Թուրքիան՝ դաշնակցելով Գերմանիայի հետ, երկրի ռազմական ոլորտում ահա այսպիսի բարենորոգչական քայլեր է կատարել: Թերթի հաջորդ համարում<sup>1</sup> «Վերջին տեղեկություններ» խորագրի տակ հաղորդվում է այն մասին, որ Բեռլինում երկյուղալի տեղեկություններ են ստացվում Բալկաններից: Թուրքիան տենդագին արագությամբ զինվում է Յունաստանի դեմ: Ենվեր փաշան և Թալեաթ բեյը Ալբանիա են ուղարկում ագիտատորներ, որոնք ալբանացիներին թելադրում են՝ հարձակվել Յունաստանի վրա: Իսկ Բուլղարիան իր կողմից խոստանում է թույլ տալ, որ թուրքական զորքերը Մակեդոնիայով ազատորեն անցնեն դեպի Սալոնիկ... Թուրք կառավարությունը դրոշակի տակ է հավաքում Առաջին և Չորրորդ զորաբանակների պահեստի զինվորներին» (№ 2, էջ 15):

Տագնապալի այդ օրերին, Բալկանյան պատերազմի ավարտից շուրջ կես տարի անց, «Զավախքը» իր 1914 թ. մարտի 16-ի համարում կրկին անդրադարձել է Յայկական հարցին: Թերթը մեծ հրճվանքով «Բարենորոգումներ Յայաստանում» վերտառությամբ հոդվածում նշում է, որ Եվրոպայի, գլխավորապես ՈՒՍԱՍՄԱՆԻ և Գերմանիայի քաղաքական հանգամանքների բախսնան շնորհիվ է կրկին ծնունդ առնում Յայաստանի բարենորոգումների խնդիրը: «Տարիներ, տասնյակ տարիներ շարունակ բռնապետական բովում տապակվող մի ժողովուրդ այսօր ցնծում, ուրախանում է, երբ նրան խոստանում

<sup>1</sup> «Զավախքի» այս համարը ևս թյուրիմացաբար կրում է նախորդ համարի թվագրումը՝ 05.01.1914 թ., միայն փոխված է համարանիշը:

Են տալ մարդկային տարրական իրավունքների մի փշրանք, մյուս կողմից վրեժիսնորության շանթեր է արձակում, նորանոր մարդկային սպանդանոցի թակարդներ լարում թյուրք մասսան, երբ զսպանակ է դրվում նրա անհագ ախորժակին, սանձահարվում նրա վայրենական բնագրները» (1914, № 6, էջ 44):

Այնուհետև թերթը ներկայացնում է նախատեսվող բարենորոգումների նախագծի գլխավոր կետերը, ըստ որոնց՝ «Արևմտյան Յայաստանը դարձյալ մնում է թուրքական տերության կազմի մեջ: Սակայն նա բաժանվում է վարչատարածքային երկու շրջանի: Մեկի մեջ մտնելու էին էրզուրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի, իսկ մյուսի մեջ՝ Վանի, Բաղեշի, Խարբերդի և Տիգրանակերտի վիլայեթները: Յուրաքանչյուր շրջան ունենալու էր մի վերահսկիչ, որը պետք է լիներ օտարահպատակ, բայց ոչ անպատճառ քրիստոնյա: Ուրեմն նա կարող էր լինել և մահմեդական: Եվ նրանք պաշտոնապես նշանակվելու են Բարձր Դռան կողմից մեծ տերությունների առաջարկած թեկնածուներից» (նույն տեղում, էջ 45): Այս ամենից հետո հոդվածագիրը տարակուսանք է հայտնում. «Ի՞նչ երաշխիք կարող է մեզ վստահություն ծառայել, որ Եվրոպայի առաջարկած թեկնածուները նույն հայատյաց թուրքասերները չեն լինելու, որ կային առաջ:

Ոչ մի գրավական, ընդհակառակը, ենթադրությունների 90 տոկոսը պետք է տալ հօգուտ թուրքերի և առանց տատանվելու ասել, որ այդ մեծադղորդ բարենորոգումները իրենց բոլոր կետերով ոչնչով չպիտի տարբերվեն երեկով կառավարչական ձևից, դա մի ծաղր է, հայի տառապանքի նկատմամբ մի հեգնանք՝ հայի գոյությամբ իր շահերի պաշտպանությունը փնտրող մեծ տերության:

Այս վերահսկիչներին է վերապահված հսկելու յոթը վիլայեթների վարչական, օրենսդրական և դատավարական գործերը: Վալիները դարձյալ մնում են վալի, անձեռնմխելի են նրանց իրավունքները, ինչը երեկ կամ տասը տարի առաջ էր, նույնը պիտի լինի և այսօր. նրանց գործունեությունը ազատ է վերահսկիչների իրավասություններից» (նույն տեղում):

Թերթի մարտի 23-ի համարում տպագրված վերոհիշյալ հոդվածի շարունակության մեջ հեղինակը, վերլուծելով Արևմտյան Յայաստանի համար նախատեսված բարենորոգումների ծրագիրը, նշում է, որ արևմտահայության ճակատագիրը դարձյալ չի բարելավվելու և մնալու է նույն հայատյաց կուսակալների իշխանության ներքո: «Այն երկրում, ուր ամեն գործ կաշառքների ու բաշխիչների վրա է հիմնված, բացի լավից, ամեն բան կարող է լինել: Այս անգամ էլ Եվրոպան անզոր պիտի հանդիսանա ազդելու թյուրքիայի վրա՝ կատարելու իր կամքը,— եզրակացնում է հեղինակն ու ավելացնում,— անկարող պիտի լինի, որովհետև միմյանց մեջ հակադիր են իրանց շահերը դեպի Տաճկաստանի ամբողջությունը և բաժանումը: Այս իսկ հանգամանքը մի ուժեղ միջոց է

Թյուրքիայի համար՝ խոստանալ ու ազատամիտ Եվրոպայի պահանջներին ընդառաջ գնացող երևալ, բայց խոստումը չկատարել» (1914, № 7, էջ 54): Այնուհետև հեղինակը, զարգացնելով իր միտքը, գրում է. «Ներկա պայմաններում Հայաստանում հիմնավոր բարենորոգումներ կատարելը կասկածելի է: Դա կարող է լինել այն ժամանակ, երբ Հայաստանի ազգաբնակչությունը տնտեսապես ու քաղաքականապես այնքան հասունացած կլինի, որ իր սեփական ուժերով կնվաճի ազատություն, կամ եթե ոչ, ապա Եվրոպական տերությունների շահերն այնպես կդասավորվեն Թյուրքիայում, որ ամենաուժեղի շահը, դա լինի մի տերություն, թե դաշնակիցների միություն, կպահանջի բարենորոգումների անհապաղ գործադրումը, կամ թե թյուրք կառավարությունը, կգա այն գիտակցության, որ հպատակ ազգերի ազատ ու ինքնուրույն կյանքը միայն կարող է գրավական ծառայել երկրի բարգավաճման ու զարգացման համար: Այս ճանապարհով մտցված բարենորոգումները կարող են միայն կենսունակ լինել», – վերջում եզրակացնում է հոդվածի հեղինակը (նույն տեղում, էջ 55):

Հայկական հարցի առնչությամբ «Զավախքի» հրապարակումների մեջ կարելի է առանձնացնել նաև 1914 թ. հունիսի 29-ի համարում տպագրված «Հայ-գերմանական ընկերություն» վերտառությամբ հաղորդագրությունը<sup>1</sup>, որի մեջ մասնավորապես նշված է. «Տաճկահայատանի քաղաքական և տնտեսական վիճակով այժմս սկսել են հետաքրքրվել ոչ միայն Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան, այլև Գերմանիան, որը 1895 թ. իր առաջին նախարար Օ. Բիսմարկի բերանով հայտարարել էր, «Հայկական խնդիրը չարժե նույնիսկ գերմանական մի զինվորի ոսկորները» (1914, № 14, էջ 109): «Չնայած այդ օրերից արդեն անցել է շուրջ երկու տասնամյակ, - նշում էր թերթը, - և փոխվել են ժամանակները ու փոխվել է նաև Գերմանիայի վերաբերմունքը դեպի Հայկական հարցը»: Թերթը նշում է նաև, որ Գերմանիան ահագին գումար է ներդրել Տաճկաստանի մեջ: Բաղդադի երկաթուղին, որը Պարսից ծոցը միացնում է Կ. Պոլսի հետ, շինված է գերմանական փողով: Գերմանացիները իիմա գտնում են, որ իրանց փողը ապահով դրության մեջ կլինի Տաճկաստանում, երբ իրենց փողով շինված երկաթուղիների և այլ առևտրական գործերի մեջ մասնակցեն և ակտիվ դեր խաղան հայերը: Դրա համար Բեռլինում կազմակերպվել է Հայ-գերմանական ընկերություն, որն իրեն նպատակ է դրել փոխադարձաբար միմյանց ծանոթացնել այդ երկու ազգերի կուլտուրական կյանքի և գրականության հետ» (նույն տեղում, էջ 109-110):

Այստեղ ավելորդ չենք համարում համառոտակի ներկայացնել «Զավախքի» հրապարակնան կարևոր դրույթները, նկատի ունենալով նաև այն համգամանքը, որ նշված

<sup>1</sup> «Զավախքը» նշում է, որ այդ տեղեկությունները քաղել է ռուսալեզու «Բակу» թերթի 1914 թ. 131-րդ համարից, որն իր հերթին այդ հաղորդագրությունը բարգմանաբար տպագրել է Բաքվի հայերեն «Արև» թերթից: Վերջինիս այդ համարը «Զավախքի» խմբագրությունը «դժբախտաբար չէ ստացել»:

ընկերության մասին հայ իրականության մեջ հետագայում շատ քիչ է խոսվել, նույնիսկ մեր հանրագիտարաններում այդ մասին ոչինչ չենք գտնում:

Ըստ թերթի հավաստման, այդ ընկերությանն անդամակցում էին խորհրդարանական հայտնի գործիչներ ու գիտական ուժեր: Ընկերության ոգին եղել է բժիշկ Ռորբախը, որը 1890-ականների երկրորդ կեսին շրջել է ամբողջ Արևմտյան Հայաստանում և գնահատելի ուսումնասիրություններ գրել այն ժամանակվա Հայաստանի դրության մասին: Այդ ընկերությունը հայերեն ու գերմաներեն լեզուներով հրատարակում էր իր թերթը, որի հայերեն մասի խմբագիրն էր մեր հայրենակիցբանաստեղծ Ավետիք Խահակյանը (Ալեքսանդրապոլցի): Այդ ընկերությունը մոտ օրերս ունեցել է իր առաջին ընդհանուր ժողովը, նշված է թերթում, ուր բանախոսել են բժիշկ Լեփսիուսը, որ եղել է նաև ժողովի նախագահը, հայերի կողմից խոսել է բժիշկ Գրինֆելդը (ազգությամբ հայ) և ապա՝ ընկերության նախագահ բժիշկ Ռորբախը:

«Բժիշկ Լեփսիուսը, բանալով ժողովը,— գրում է թերթը,— ողջունել է ընկերության հիմնադրումը գերմանացիների կողմից՝ ընդգծելով հայ ազգի կուլտուրականությունը և այն մեծ դերը, որ խաղացել են հայերը Արևելքի և Արևմուտքի միջև. հարկավոր է ուսումնասիրել հայ ազգի անցյալը և ներկան,— ասել է նա,— որպեսզի ըստ այն էլ տնօրինել այդ ազգի ապագան» (նույն տեղում, էջ 110):

Հայոց կողմից խոսել է բժ. Գրինֆելդը, որը շեշտել է, թե պետք է ստեղծել կուլտուրական սերտ կապեր հայերի և գերմանացիների միջև: «Պատմությունից հայտնի է,— ասել է նա,— որ շատ հին ժամանակներում այդ երկու ազգերը միմյանց հետ հարաբերության մեջ են եղել: Գերմանական խաչակիրներին հայերը մեծ ծառայություններ են մատուցել, իսկ մեր այժմյան հարաբերությունը պիտի կրի զուտ կուլտուրական բնավորություն: Նոր սերունդը առանձին սեր է ցույց տալիս դեպի գերմանական գրականությունն ու գիտությունը: Այս երկու ազգերի մեջ կան ընդհանուր գծեր, և իզուր տեղը չէ, որ Արևմուտքում հայերին անվանում են Արևելքի գերմանացիներ: Մինչև այժմ Գերմանիայում հայերի մասին տարածված էին կանխակալ կարծիքներ, որոնք, հուսալի են, որ շուտով անհետանան: Եվ այդ գործում մեծ դեր ունի կատարելու մեր սույն՝ Հայ-գերմանական ընկերությունը»,— վերջում շեշտել է բանախոսը (նույն տեղում):

Այնուհետև թերթը նշում է, որ այդ ողջույնի խոսքից հետո հանդես է եկել ընկերության նախագահ, բժիշկ Ռորբախը, որի թեման եղել է «Հայ ազգը որպես կուլտուրական գործոն»: «Եթե հայերի մասին, որպես կուլտուրական գործոնի, խոսում եմ ես,— շեշտել է նա,— և ոչ թե հայերից մեկը, պատճառ այն է, որ ես ավելի լավ եմ ճանաչում հայերին, քան թե իրենք՝ հայերից շատերը: Հայոց այժմյան կյանքը ինչպես փաստորեն հաստատում է պատմությունը, պարզ ցույց է տալիս, որ հայ ազգը

Աերկայացնում է իրենով մի խոշոր դրական և գործունյա ուժ և իր մեջ պարունակում է անսպառելի աշխատանքի ու էներգիայի կարողություն:

Կուլտուրայի կողմից հայը եղել է Արևելքում ամենաուժեղը և մեծ դեր է կատարել Արևելքի պատմության մեջ: Յենց իին դարերում հայերը ցույց են տվել վճռականություն և մտքի թափ՝ բաց գրկով ընդունելով ամեն մի նոր քաղաքակիրք իդեա: Արևելքում ամենից առաջ քրիստոնեություն ընդունել են հայերը և այն դարձրել պետական կրոն: Յայաստանի միջով անցնելիս են եղել շատ ճանապարհներ, որոնք միացրել են Արևելքը Արևմուտքի, Ասիան Եվրոպայի հետ: Շնորհիվ այն հանգամանքի, որ Յայաստանը անմիջապես կապվում էր այն ժամանակվա մեծ պետությունների և Պարսկաստանը Յուզմի հետ՝ մեկ կողմից, իսկ մյուս կողմից՝ արևելյան մանր ազգերի հետ: Յայերն այն ժամանակ ներկայացնում էին մի պատերազմող ժողովուրդ: Կոստանդին կայսեր ժամանակ Յայաստանը պատերազմական մեծ ուժ էր...

Եվրոպական ճանապարհորդները հանդիպել են միայն հայ վաճառականների և դրանից էլ եզրակացրել, որ ըստ մեծի մասի, հայերը վաճառական ազգ են: Բայց դա սխալ տեսակետ է,— ասել է, Ռորբախը,— պետք է հայերին ուսումնասիրել հենց Յայաստանի սրտում: Ես այցելել եմ շատ դպրոցներ և ամեն տեղ մանուկների մեջ նկատել եմ անհագ ծարավ դեպի ուսումը, գիտությունը և լուսավորությունը: Բնորոշ են այն գործերը, որոնք պահանջում են մտավոր կարողություն, գլխավորապես գտնվում են հայոց ձեռքին: Անհրաժեշտ է, որ մոտիկից և հիմնավորապես ծանոթանալ հայոց հետ» (նույն տեղում): «Մինչև այժմս մենք հայերին ճանաչել ենք մակերևույթորեն, դրա համար էլ գործել ենք շատ սխալներ, որ անհրաժեշտ է ուղղել»,— իր գեկուցման վերջում շեշտել է Ռորբախը (նույն տեղում): Բժիշկ Ռորբախից հետո հայ գեղարվեստի մասին ընդարձակ գեկուցումով հանդես է եկել Գարեգին Վրոց Յովսեփյանը (հետագայում՝ Մեծի Տաճա Կիլիկիոյ կաթողիկոս):

Գերմանիան դրանից հետո, այդ նույն օրերին կրկին կատարում է իր «ամենազար-իութելի սխալը» և դաշնակցելով Թուրքիայի հետ՝ դառնում է Յայոց Մեծ եղեռնի կազմակերպման մեղսակիցը: Այնինչ, ժամանակն էր, որ Յայկական հարցը ստանար իր լուծումը, քանի որ, ըստ մշակված ծրագրի, Արևմտայն Յայաստանի պատմական տարածքի մի մասի վրա այդ ժամանակ ստեղծվելու էին երկու ինքնուրույն նահանգներ: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմը ի չիք է դարձնում Յայկական հարցի լուծման բոլոր հույսերը, քանի որ այն բախվում էր մի կողմից Թուրքիայի ազգայնա-մոլական, թուրանյան ծրագրերին, իսկ մյուս կողմից՝ Մերձավոր ու Միջին Արևելքում եվ-րոպական տերությունների հետապնդած զավթողական քաղաքականությանը:

«Զավախքը» պատերազմի առաջին իսկ օրերին՝ 1914 թ. օգոստոսի 7-ի համարի «Եվրոպան իրդեհի մեջ» խորագրով առաջնորդողում, ներկայացնելով մարտնչող

կողմերին, կարծիք էր հայտնում, որ Վիլհելմ կայսրը շուտով «կպատժվի չարաչար» (1914, № 16, էջ 122): Թերթի հաջորդ՝ սեպտեմբերի 13-ի 17-րդ համարը նույնպես բացվում է «Ամբարտավանը վերջ ի վերջո կը նկնի» առաջնորդողով, որտեղ Գերմանիան դատապարտվում է պատերազմը սկսելու պատճառով: Նույն համարում տպագրված է նաև պատերազմից վնասվածներին օգնություն ցույց տվող կովկասյան կոմիտեի կառավարչի 1914 թ. օգոստոսի 25-ին գրած 58 թվակիր փաստաթուղթը, որով նա «Զավախքի» խմբագրին խնդրում է իր թերթում բանալ հանգանակություն՝ հօգուտ հիշյալ կոմիտեի գործունեության: Գրեթե նույն նպատակն են հետապնդում նաև Վ. Վազյանի «Պետք է օգնել» վերտառությամբ թղթակցությունն ու այլ նյութեր, ինչպես նաև Գերմանիայի մասին նախորդ համարից շարունակվող ընդարձակ տեղեկատվությունը:

Թերթի սեպտեմբերի 26-ի № 18-ը ևս գրեթե ամբողջությամբ նվիրված է ընթացող պատերազմի ծանր հետևանքներին: «Ահրեւի պատերազմը,- գրում է թերթը,- որին դեմ է ամբողջ քաղաքակիրք աշխարհը և որի վերացումն են տենչում մարդիկ, այսօր իր թևերը տարածելով համայրա ամբողջ Եվրոպայի վրա, արյան գետեր է հոսեցնում՝ կտրելով հազարավոր երիտասարդ մարդկանց ծաղիկ կյանքը: Ուստաստանը, որ ներկա պարագաների հանդեպ ևս խաղաղության ու անդորր կյանքի ջատագովն էր, և որ ամեն զիջողություններ հանձն առնելով չեր ուզում սուրը մերկացնել, հակառակորդի անմարդավայել ու կործանարար քայլերը տեսնելով, հակառակ իր կամքին, ստիպված եղավ սուրը հանել պատյանից և պատերազմի փողը հնչեցնելով՝ կրվի դաշտ իջավ՝ ջախջախելու գերմանական միլիտարիզմը և ամբարտավան Վիլհելմի դեսպոտական ձգտումները: Մեր հայրենիքի երիտասարդ և ուժեղ մասը գենք վերցնելով շտապեց պատերազմի դաշտ, տանը թողնելով իր ծեր հորն ու մորը, կնոջն ու մանրիկ երեխաներին, որոնք զրկվելով իրենց սիրելիներից, զրկվում են նաև աշխատող ձեռքերից, ապա ուրեմն և ապրուստի միջոցից: Այդպիսի հազարավոր հայրեր, ամուսիններ, եղբայրներ ու սիրասուն զավակներ գենք վերցրած դուրս են եկել թշնամու դեմ՝ փրկելու հայրենիքը գալիք վտանգից: Իսկ ո՞վ պիտի սրբե մեր հայրենիքի այդ արժանավոր զավակների ընտանիքների մոր ու հոր, կանանց ու երեխաների արտասուքները, ո՞վ պիտի սփոփե նրանց այս ծանր ժամին, ո՞վ պիտի օգնության հասնի այդ անմեղ արարածներին՝ փրկելու նրանց քաղցի ու կարիքի սուր ճանկերից: Ո՞վ պիտի հոգա այն հարյուրավոր վիրավոր ու հիվանդ զինվորների պակասը, ո՞վ պիտի խնամե պատերազմի դաշտում վիրավորված, գնդակը մարմնի մեջ կրող տառապող զինվորներին...» (նույն տեղում, էջ 137):

Ապա թերթն իր «Օգնեցեք, գործը սուրը է», «Ախալքալաքցինե՛ր, միք մոռանա պահեստի զինվորների ընտանիքներին» և այլ խորագրերի տակ տպագրված նյութերում Զավախքի հայությանը կոչ է անում նյութական ու բարոյական օգնություն ցույց տալ,

կարեկցել պատերազմից վնասված ընտանիքներին՝ մասնակցելով այդ նպատակով ստեղծված տեղական կոմիտեների կազմակերպած միջոցառումներին:

«Զավախքի» հոկտեմբերի 16-ի 19-րդ համարը ևս նվիրված է նույն խնդիրներին: Այն բացվում է հայ ազգային-ազատագրական ապարարի անձնուրաց նվիրյալ Նիկոլ Դումանի (Տեր-Հովհաննիսյան) մահախոսականով, որի հեղինակն է թերթի խմբագիր Վ. Շահպարոնյանը: Այնտեղ կարդում ենք. «Կյանքը ճահիճ է, որտեղ մարդ-գեռումները, տիղմի մեջ իրար իրիրելով, իրենց անփառունակ ֆիզիկական զանգվածն են պարարտացնում և միայն իրենց անասնական վայելքների խրախճանքին են ձգտում... Եվ այդ համատարած ճահճի միջից ցասումով դեպի վեր են սլանում ըմբոստ հոգիներ, որոնք զգված նեխված կյանքից, դառնացած ստրկական կարգ ու կանոնից, վրորվված բռնություններից և ոգևորված եթերային-անրջային գաղափարներով, իրենց անձը նվիրում են ստրուկ մարդկությանը և իրենց արյունով լվանում անիրավության արգասիք հոգեկան կեղտերը... Այդպիսիններից մեկն էր Դումանը՝ Նիկոլ Տեր-Հովհաննիսյանը, որը, թողնելով իր ուսուցչական պաշտոնը, գոչի տեղ իրացան առնելով, տարիներ շարունակ սրբում էր որբերի արցունքները և իր առնական կրծքով կռվում էր բռնակալների ոտնձգությունների դեմ... Եվ այդ հերոսը այսօր չկա... որին դեռ շատ պետք ունեինք» (էջ 141):

Իսկ նոյեմբերի 20-ին 20-րդ համարն ազդարարում է՝ «Յայաստանի լեռներում էլ հնչեց գոռ պատերազմի փողը», և թերթը թվարկում է այն իրատապ անելիքները, որոնք կանգնած են ամբողջ հայության, այդ թվում և ջավախքահայության առջև: «Յայի արևը ճառագայթեց,- գրում է թերթը,- արշալույսի շողքերն է, որ արևելքից ծագեց, արցունքի ծովը ցամաքելու է, լեռնացած ցավն ու վիշտը հարթվելու, հայ ծերը, հայ կինը, հայ մանկտին լաց ու կոծի փոխարեն հանգիստ պիտի գտնեն, իսկ հայ տղամարդն էլ վերջապես սուրը պատյանը դնելով, ապահով իր լեռն ու դաշտը պիտի վարե... Բայց այդ լինելու է վաղը... Իսկ այսօ՞ր...: Այսօր գուլումն է թագավորում Յայաստանի լեռներում, այժմ մեր արյունակզակ դարավոր ոսխը ազատ և համարձակ նախճիրներ է կատարում և զազազած՝ հայի գերեզմանն է փորում... Գնում են արծիվները իրենց արյունով նվիրական երկիրը ոռոգելու... Գնում են օսմանլվի ոտքերի տակ տրորված իրենց եղբորը փրկելու» (էջ 145): Նույն կոչերն են հնչում նաև «Ահավոր ուխտը», «Նահատակները վրե՛ժ են կոչում», «Զավախքի հայեր», «Մեր կամավորներին», «Կամավորների մեկնումը», «Քիչ լրջություն է պետք» վերտառությամբ իրապարակումներում: Իսկ «Վերջին տեղեկությունները» խորագրի տակ գետեղված հակիրճ լուրերից մեկում հաղորդվում է, որ «համիդիեի գնդերից մեկը, ջարդ կրելով ռուսներից, իր ճանապարհին ավերել ու թալանել է հայկական գյուղերը, Անադ ու Իրեց գյուղի բնակիչները սրի են քաշված: Գնդի հրամանատար Աբդուլ Մեջիդը, մորթելով Տեր-

Հովհաննեսին, նրա գլուխը ցցել է նիզակի ծայրին և հանդիսավոր թափորով անցել փողոցներով ու հրապարակով» (նույն տեղում, էջ 151):

«Զավախքի» նույն տարվա վերջին համարը (13.12.1914 թ., № 21) և ամբողջությամբ նվիրված է արևմտահայության օրհասական անցքերին: Այնտեղ տպագրված «Մեր անմիջական պարտքն է», «Օգնեցեք գաղթականներին» վերտառություններով նյութերում «թուրքահայոց դժոխքից» դարձյալ հնչում են «օգնության ողբագին ձայները»: Դրանցից առաջինում կարդում ենք. «Էլի քյուրդի յաթաղանն է, որ մորթում է խեղճ անպաշտպան հային, էլի այն սարսուռ ազդող ողբն է, էլի այն կին-երեխայի վայնասունը, էլի այն աղեխարշ հոգոցն ու մղկտոցը... Թուրքն ու քյուրդն է, որ իբրև նապաստակ լեղապատառ փախչում է ռուս բանակից, հայ ֆիդայու առջևից, բայց իբրև առյուծ՝ հոշոտում կանանց և երեխաններին... թուրքն ու քյուրդն է, որ հզորի առաջ քծնող, ողորմելի արգահատանքի արժանի, բայց հայ անզեն շինականի առաջ հերոս, հերոս բանության, կողոպուտի, և ավելի արյունուշտ, քան թե բորենին... Եվ այսօր Յայաստան կոչված այդ դժոխքից տասնյակ հազարավոր հայ ծերունիներ, կանայք, երեխաններ, այս բուք-բորանին, այս զարհուրելի ցրտերին, թողած իրենց տունն ու տեղը, հայրենական օջախը, մերկ ու բոկոտն փախել են և քաղցած ու անօգնական ապավինել Սողանլուի լեռներում ծվարած նույնքան խեղճ ու անձար հայ գյուղերում» (նույն տեղում, էջ 154): Թերթը Զավախքահայությանը կոչ է անում՝ օգնության ձեռք մեկնել իրենց արյունակից այդ աղետյալներին: «Արդ, ամեն ոք թող շտապի օգնության հասնել՝ թերևացնելու մեր գաղթական հայերի կարիքը, ով ինչով կարող է, - ասկած է այնտեղ: -Բարեգործական ընկերության վարչությունը շնորհակալությամբ կընդունի ձեր նվերները: Հասեք օգնության, պահանջը մեծ է, կարիքը՝ սոսկալի» (էջ 156):

Այս համարից հետո զանազան արգելքների ու դժվարությունների պատճառով 1915 թ. սկզբից շուրջ 10 ամսով դադարեցվել է «Զավախքի» հրատարակությունը: Նրա տպագրությունը վերսկսվել է նույն տարվա ավարտին, երբ արդեն ընթացքի մեջ էր Առաջին համաշխարհային պատերազմը և տեղի էին ունենում արևմտահայության զանգվածային տեղահանություններն ու սոսկալի կոտորածները: Թերթի նորովի լույս տեսած սակավաթիվ համարներում այդուհետև լուսաբանվում են Մեծ եղեռնի սահմուկեցուցիչ պատկերներն ու հետևանքները թե՛ Արևմտյան Յայաստանում և թե Աքալբալաքի գավառում ու նրա մերձակա շրջաններում, որն ուսումնասիրության մեկ այլ թեմա է:

Այսպիսով, «Զավախքն» իր առաջին շոշանի գործունեության ընթացքում լայն տեղ է հատկացրել Յայկական հարցի լուսաբանմանը: Թերթը, ինչպես սեփական, այնպես էլ օտարակեզրու մամուլի էջերից հանված նյութերի տպագրության միջոցով իր ընթերցողներին տեղյակ է պահել այդ խնդրի տեղական ու միջազգային արծարծումներին ու

պարզաբանումներին՝ դրանով իսկ իր նպաստը բերելով համագային նշանակություն ունեցող այդ կարևոր հարցի լուծման գործին:

**Владимир Магалян, Освещение Армянского вопроса в газете “Джавахк”.**- В статье представлена деятельность выходившей в 1913-1916гг. в г. Ахалкалаки газеты “Джавахк”, которая освещала не только социально-экономические, общественно-политические, культурно-просветительские проблемы уезда, но и с особым вниманием обращалась к состоянию армянского населения Западной Армении в период Первой мировой войны, резко осуждала массовые депортации и резню армян турецкими варварами, равнодушие и неопределенность позиции мировых сверхдержав того времени. В работе впервые обсуждаются материалы, большая часть которых написана очевидцами, отчего их историческая ценность резко возрастает.

**Vladimir Maghalyan, The elucidation of the Armenian Cause in the newspaper “Javakhk”** - The article elucidates the activity of the newspaper “Javakhk” published in Akhalkalaki from 1913 to 1916. The paper not only focused on the social and economic, public and political, literary and cultural life of the province, but also referred to the unbearable and severe conditions Western Armenians lived in, in the period of World War I, condemned mass deportations and massacres of the Armenian population in Ottoman Turkey, as well as pilloried the powerful European countries for their indifference and shaky position in the solution of the Armenian Cause and the Armenian Genocide. Most of the materials published in “Javakhk” are actually referred to and discussed in the present article for the first time. The majority of them are eye-witness testimonies and contain undeniable facts of the extermination of Western Armenians. They have so far not lost their historical significance.

**Վլադիմիր Մաղալյան** - բանասիր. գիտ. թեկնածու- ԵՊՀ ԸԸԻ-ի հայ-վրացական հարաբերությունների բաժնի առաջատար գիտաշխատող: